


«ԿԱՅ-ՔԱՂԱՔԱԳԷՏ»ՆԵՐՆ ՈՒ ՍԱԴԴԻՉ «ԸՆԴԴԻՄԱԴԻՐ»ՆԵՐԸ


Posted on August 26, 2016 by Keghart



Category: [Opinions](#)




Համօ Մոսկոֆեան, Չարթօնք, 15 Օգոստոս 2016

Այս օրերուն, երբ բարձրագոյն մակարդակի վրայ, Ռուսիոյ նախաձեռնութեամբ, Արցախի եւ Հայաստանի կարեւորագոյն հարցերը կը քննարկուին Մոսկուայի, Երեւանի, Պաքուի եւ Թեհրանի մէջ, մեր ժողովուրդի «վայ կիկոս»ները լաց ու կոծ, «սուգ ու շիւան» բարձրացուցած են, անպատմելի հայիոյեանքներով համեմուած Ռուսիոյ թէ Հայաստանի ղեկավարներուն դէմ (Թուրքիա եւ  Ազրայէճանը զանց ընելով...), կուրծք ծեծելով, թէ Արցախի հողերը պիտի յանձնըուին, ահաւոր պատերազմներ պիտի ըլլան, երկրագունդը պիտի կործանի եւ Հայաստանը 2-րդ ջրիեղեղին տակ պիտի մնայ...: Վա՛յ մեզի:

Հրահրուած հակա-ռուսական մոլուցքը, Հայաստանի ապականած «օլիկարխիկ» համակարգին, կաշառակերութեան թէ արան-թալանին դէմ փոխանակ ուղղուելու եւ փորձելու լուծումներ գտնելու այդ յոռի երեւոյթները սրբագրելու, ուղղուած է նախագահ Փութինի (որ շուարած է թէ ո՞ր մէկ ճակատի վրայ պայքարի...) եւ իբր թէ անոր «դրածոյ» նախագահ Սերժ Սարգսեանի դէմ: Այժմ, սլաքները ուղղուած են Արցախի ղեկավարութեան, որոնք միայն վերջերս կանգնեցուցին ու ետ շարտեցին Ազրայէճանի անարգ յարձակումը, յանձինս զօրավար Վիթալի Պալասանեանի, նախագահ Բակօ Սահակեանի եւ հայազգի անմահ հերոսներու, որոնք նահատակուեցան, գլխատուեցան, բայց քարուքանդ ըրին նաեւ ազերի հրասայլերն ու սահմանամերձ ավանները:

Համօ Մոսկոֆեան, Չարթօնք, 15 Օգոստոս 2016

Այս օրերուն, երբ բարձրագոյն մակարդակի վրայ, Ռուսիոյ նախաձեռնութեամբ, Արցախի եւ Հայաստանի կարեւորագոյն հարցերը կը քննարկուին Մոսկուայի, Երեւանի, Պաքուի եւ Թեհրանի մէջ, մեր ժողովուրդի «վայ կիկոս»ները լաց ու կոծ, «սուգ ու շիւան» բարձրացուցած են, անպատմելի հայիոյեանքներով համեմուած Ռուսիոյ թէ Հայաստանի ղեկավարներուն դէմ (Թուրքիա եւ  Ազրայէճանը զանց ընելով...), կուրծք ծեծելով, թէ Արցախի հողերը պիտի յանձնըուին, ահաւոր պատերազմներ պիտի ըլլան, երկրագունդը պիտի կործանի եւ Հայաստանը 2-րդ ջրիեղեղին տակ պիտի մնայ...: Վա՛յ մեզի:

Հրահրուած հակա-ռուսական մոլուցքը, Հայաստանի ապականած «օլիկարխիկ» համակարգին, կաշառակերութեան թէ արան-թալանին դէմ փոխանակ ուղղուելու եւ փորձելու լուծումներ գտնելու այդ յոռի երեւոյթները սրբագրելու, ուղղուած է նախագահ Փութինի (որ շուարած է թէ ո՞ր մէկ ճակատի վրայ պայքարի...) եւ իբր թէ անոր «դրածոյ» նախագահ Սերժ Սարգսեանի դէմ: Այժմ, սլաքները ուղղուած են Արցախի ղեկավարութեան, որոնք միայն վերջերս կանգնեցուցին ու ետ շարտեցին Ազրայէճանի անարգ յարձակումը, յանձինս զօրավար Վիթալի Պալասանեանի, նախագահ Բակօ Սահակեանի եւ հայազգի անմահ հերոսներու, որոնք նահատակուեցան, գլխատուեցան, բայց քարուքանդ ըրին նաեւ ազերի հրասայլերն ու սահմանամերձ ավանները:

-«Ո՞վ տարածք կը յանձնէ, ի՞նչ տարածք կը յանձնեն: Այդ բոլորը շահարկումներ են: Ընդհանրապէս տարածքներու խնդիր, ի հարկէ, գոյութիւն ունի, բայց այդ միակողմանի չէ, եւ դժբախտաբար Ազրպէյճանին յաջողած է այդ հարցն այնքան շահարկել, որ մենք կարծես այդ խայծը կուլ տուած ենք եւ իրար կ'ուտենք չեղած տեղը: Կիկոսի պատմութիւն դարձած է: Տարածքներ կրնան յանձնուիլ, բայց որ չյանձնեն...»:

Այս ոչ այլ ինչ է, եթէ ոչ կիկոսութիւն վտանգաւոր շահարկումներով լի, հայութեան միասնականութիւնը խարխիւղ... ի՞նչ է մենք տարածքային խնդիր չունի՞նք Ազրպէյճանի հետ: Շահումեանի շրջանը, Գետաշէնը, Չարտախլուն, ամբողջ հիւսիսային Արցախը: Այդ տարածքները 15-20 հազար քառակուսի քիլոմէթր կը կազմէին», զանգուածային լրատուութեան միջոցներուն տրուած հարցազրոյցի ըթացքին կը յայտնէ Լ.Ղ. Հանրապետութեան նախագահի խօսնակ Դաւիթ Պապայեան:

Հայ ժողովուրդի ամենէն սիրուած ազգային հերոս Զօրավար Անդրանիկ Օզանեանի պատմական խօսքերը կը մէջբերենք, 100 տարի առաջ ըսուած. «Ռուսին մեզի թշնամի մի՛ դարձնէք...»:

Այո, մենք շրջափակման մէջ ենք^a Մայր Հայրենիքի թէ Սփիւռքի մէջ: Երբե՛ք պետք չէ մոռնանք, որ այսօրուան Հայաստանը եւ Արցախը ազատագրուած են ռուսական զօրքերու կողմէ՝ 1795-ին եւ 1826 թուականներուն...:

